



42. ԹԱԶԱՎՈՐՆ ՈՒ ՉՈՒՄԱՆԸ¹

Մեկ օր թաքավորի մեկը կանչում ա իր մոտ իր պալատական-ներից իրեքին ու ասում ա.

— Իրեք հարց պտի տամ ձեզ, թե գտաք՝ էնա շատ փող կտամ ձեզ, թե չգտաք՝ պտի գլխներդ կտրիլ տամ: Գնացեք մի շաբաթ միտք արեք ու եկեք ինձ ասեք տենամ: Առաջին. տարվա ո՞ր տարին ա ամենալավը, երկրորդ. օրվա ո՞ր օրն ա ամենալավը, երրորդ. սհաթվա ո՞ր սհաթն ա ամենալավը:

Էդ իրեք մարդը գնացին միտք արին, միտք արին, հինգ օր անց կացավ, բան չիմացան, թե ինչ ասեն թաքավորին, վերջը խոսք կապեցին՝ ընկեն քաղաքե-քաղաք, գեղե-գեղ՝ հարց ու փորձ անեն, բալի մի խելոք մարդի ուստ բերեն, որ կարենա էդ հարցերին պատասխան տա: Գնացին ընկան քաղաքներն ու գեղերը, ման էկան, ման էկան, մի սաղ օր ու գշեր ման էկան, տենց մի խելոք մարդ չգտան: Վերջը՝ գլխներիցը ձեռ վե կալան ու ասացին. «Աղբեր, ինչ որ ճակատներիս գրված ա՝ էն էլ պտի ըլնի. բալի հենց էտ էր գրած, որ թաքավորը մեզ սպանի: Գնա՛նք, թող մեր գլուխը կտրի, ճարն ինչ»:

¹ Վերնագրից ներքև, փակագծերի մեջ հավանաբար բանահավաքի կողմից, նշված է՝ Թիֆլիզում—Հավլարաբի մասնումը (Մ. Կ.):

Ու մյուս օրը առավոտորհանց ետ են դառնում ու ընկնում են ճամբա: Գալիս են գալիս՝ բիրդան մի սիրուն հաղի ձեն ա ընկնում դրանց անգաջին. կաղնում են, անգաջ են անում՝ տենում են որ շորանի հաղի ձեն ա:

— Տղե՛ք,— ասում են,— ջհանդամ, շէլավ-շէլավ՝ էկեք մի էս փորձն էլ փորձենք. գնանք էդ շորանին հարցնենք, բալի մի ճար անի մեր դարդին,— ու գնում են շորանի մոտ:

Մոտենում են, տենում՝ մի ուրախ շորան, քտրի վրա նստած, ոչխարները առաջին արածում են, ինքն էլ ձեռը գրել ա շանի տակն ու ձենը աշխարքը գցել:

— Բարի օ՛ր, շորան բիձա:

— Աստու բարի՛ն, բարի աղեք:

— Յարա՛բ, ա՛յ շորան բիձա, որ մի բան ասենք, կարա՞ծ մեղ օգնես:

— Ասեք տենամ, գլխիս վրա:

— Ա՛յ շորան բիձա, ախր թաքավորը մեզ մի հարց ա տվել ու ասել ա, թե կատասխանեք՝ գլխներդ կկտրեմ. հիմի մենք շենք գիտում, թե ի՞նչ ասենք: Նա ասում ա. «Իմացեք՝ տենամ տարվա ո՞ր տարին ա ամենալավը, օրվա ո՞ր օրն ա ամենալավը, սհաթվա ո՞ր սհաթն ա ամենալավը»:

— Ա՛յ հեր օրհնածներ, էդ շատ հեշտ հարց ա. ինձ տարեք թաքավորի մոտը՝ ես նրան կպատասխանեմ: Համա պտի ամեն մեկդ մի զատ տաք ինձ՝ մեկդ մի բուռը ոսկի տվեք, մեկդ մի բուռը էրծաթ, մեկդ էլ տասը հատ մատանիք, լա՛վ:

— Շա՛տ լավ,— ուրախ-ուրախ ասեցին պալատականները ու էն սհաթը նրանցից մեկը վազեց քաղաքը, ինչ որ շորանը ուզում էր, բերեց տվեց իրան ու ասեց.— Դե՛, թեզ արա, գնա՛նք:

Չորանը էդ ոսկին, էրծաթն ու մատանիքները տարավ տվեց կնկանը ու ետ դառավ էդ մարդկանց հետ քաղաքը՝ թաքավորի մոտը, ոչխարներն էլ հենց հանդումը թողեց: Քաղաքումը շորանին լավ շորեր հագցրին ու տարան թաքավորի մոտ:

Թաքավորին ասեցին.— Մեզ տեղակ էս մարգին ենք բերել, որ քու հարցին պատասխան տա:

Թաքավորն ասեց.— Լա՛վ:

Թաքավորը վե կալավ.— Ասա տենամ՝ տարվա ո՞ր տարին ա ամենալավը:

Չորանը ասեց.— Թաքավորն ապրած կենա, էս տարին ա ամենալավը, շունքի էս տարի ես բիրդտն հարստացա, որ ըսկի մի տարի չէր էղած:

— Լա՛վ,— ասեց թաքավորը,— բա օրվա ո՞ր օրն ա ամենալավը:

Չորանը ասեց.— էս օրն ա ամենալավը, շունքի էսօր չորանը թաքավորի հետ հավասարվել ա ու թաքավորի պալատումը կադնած թաքավորի հետ խոսում ա:

— Էդ լի լավ,— ասեց թաքավորը,— հիմի ասա տենամ՝ սհաթվա ո՞ր սհաթն ա ամենալավը:

Չորանն ասեց.— էս սհաթն ա ամենալավը, շունքի էս սհաթին իրեք մարդ նհախ մեռնելուց ազատվեցին:

Թաքավորը շատ զարմացավ չորանի խելքի վրա ու ասեց.— Դու տնարար, գնա՛, ինչքան փող որ ուղում ես, վե կալ խազինից ու քեզ հալալ ա:

Չորանը դնաց թաքավորի խազինիցը մի եքա մեշոկ ոսկի վե կալավ ու տարավ իր տունը: Ընդուց դենը չորանը ոչխարը տվեց ուրըշի, տունը տվեց ուրըշի, ինքը կնկանը, էրեխանցը վե կալավ և կավ քաղաքը, մի լավ տուն առավ, սարք ու կարք առավ. խաս շորեր առավ՝ մի խոսքով դառավ մի հարուստ ալա ու աղի պես ապրեց ընչանք մեռնիլը:

Աստանից իրեք խնձոր վեր եկավ. մեկը ասողին, մեկը լսողին, մեկն էլ էս տան տիրոջը:

